

Ասմունքի անգլերեն մրցույթ Լոռու և Տավուշի դպրոցականների համար

Ս.թ. մարտի 10-ին Լոռու մարզի Դեբետ համայնքում գտնվող Հայաստանի մանուկներ հիմնադրամի ՄՍԱՐԹ կենտրոնը իր ծրագրերը մեկնարկեց անգլերեն պոեզիայով:

Լոռու և Տավուշի մարզերում անգլերեն ուսումնասիրող 7-12-րդ դասարանների դպրոցականները հավաքվել էին՝ ուժերը չափելու ասմունքի ազգային մրցույթում (NPRC): Սա ՔՈԱՖ ՄՍԱՐԹ կենտրոնում իրականացվող առաջին մեծածավալ միջոցառումն է:

«Շատ հուզիչ է, որ մեր երեխաները հնարավորություն են ունենալու ասմունքելու նման գերարդիական միջավայրում,- ասաց Քալեբ Հոուբենը՝ ԱՄՆ Խաղաղության կորպուսի անգլերենի ուսուցման կամավորը, ով կազմակերպում է Լոռու և Տավուշի այս առաջնությունը:- Մրցույթին մասնակցությունը ցույց է տալիս, որ անգլերեն սովորող երեխաները ոչ միայն կարողանում են գործածել լեզուն, այլև նրանց համար կյանքի ու կարիերայի զարգացման դռներ են բացվում: Հրաշալի է, որ մեր աշակերտները հնարավորություն կունենան փայլելու այս եզակի կրթական միջավայրում: Մենք հպարտ ենք ՔՈԱՖ ՄՍԱՐԹ-ի առաջին հյուրերը լինելու համար»:

Հայաստանի մանուկներ հիմնադրամի փոխտնօրեն **Իննեսա Գրիգորյանը** նշեց. *«ՔՈԱՖ ՄՍԱՐԹ կենտրոնում Խաղաղության կորպուսի կազմակերպած մրցույթը հյուրընկալելը մեզ համար լրացուցիչ հնարավորություն է ճանաչելու Հայաստանի ամենապայծառ ու խելացի երիտասարդներին, որ մեր երկրի ապագան են: Հատկապես նշանակալի է, որ ասմունքի մրցույթն անցկացվելու է Ամենայն հայոց բանաստեղծի՝ մեծ լուռեցի Հովհաննես Թումանյանի ծննդավայրում»:*

Մայքլ Չենը նույնպես ԱՄՆ Խաղաղության կորպուսի անգլերենի ուսուցման կամավոր է: Նախագահում է ասմունքի ազգային մրցույթի հանձնաժողովի աշխատանքները. *«Այս տարի նախընտրական փուլն անցկացվելու է 10 մարզերում, ու մենք ակնկալում ենք 7-12-րդ դասարանների շուրջ 500 մասնակից ամբողջ Հայաստանից: Դեբետի մրցույթն առաջիններից մեկն է, և մենք դրանով բարձր չափորոշիչներ ենք սահմանում: Հույս ունեն, որ Հայաստանի հյուսիսային շրջանում հետաքրքրությունը մրցույթի հանդեպ առանձնակի բարձր կլինի: Այս տարվա թեման է «Ինչն է մեզ մարդ դարձնում»:* Հաճույքով եմ հետևելու երիտասարդների ներկայացրած գործերին ու հատկապես հարաբերություններին, ինքնավստահությանը, կարեկցանքին ու ներառականությանը վերաբերող քննարկումներին»:

Ասմունքի ազգային մրցույթի մանրամասներին կարելի է ծանոթանալ կայքում՝ nprcarmenia.com: Առաջին անգամ մրցույթն անցկացվել է 2010 թ.-ին Հրազդան քաղաքում ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավորների կողմից: Այս տարի այն նշվում է 8-րդ անգամ: Կազմակերպչական աշխատանքներն իրականացնում է

«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն՝ Խաղաղության կորպուսի կամավորների հետ համատեղ: Եզրափակիչը տեղի կունենա մայիսի 5-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում (AUA): Վերջինս մրցույթի հովանավորն է, օգնում է դպրոցականներին կատարելագործելու իրենց անզլերենը, քննադատական մտածողությունը և հանրության առջև ելույթ ունենալու հմտությունները:

Խաղաղության կորպուսի մասին

ԱՄՆ Խաղաղության կորպուսը ստեղծվել է 1961 թվականին Ջոն Բ. Բենեդիկի կողմից՝ աշխարհում խաղաղություն և ընկերություն ամրապնդելու նպատակով: Խաղաղության կորպուսը Հայաստանում գործում է 1992 թվականից՝ Հայաստանի կառավարության հրավերով: Այդ ժամանակից ի վեր ավելի քան 1,000 ամերիկացի կամավոր է ծառայել Հայաստանի մարզերում: Այժմ մոտ 100 կամավոր ծառայում է ՀՀ տարբեր մարզերում, որոնք իրենց գործունեությունն են ծավալում հանրակրթական դպրոցներում և հասարակական կազմակերպություններում երկու ծրագրերի շուրջ՝ «Անզլերենը՝ որպես օտար լեզու» և «Համայնքի և երիտասարդության զարգացում»:

Կամավորները Հայաստանում ապրում և աշխատում են 27 ամիս, սովորում են հայերեն, ծանոթանում հայ մշակույթին և իրականացնում տարբեր մրցույթներ և ճամբարներ:

Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) մասին

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների քավելի քան 67,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում: